



Հ ղվկիմմմմկիմմմոնս մկկոյոյո կվնո Հ վոյ Շոլկիմմմկիմմոնս

2 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՐ ԵՎ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԱՐԿՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ



Մեր համալսարանի պատվիրակության հերթական գործուղման վայրը Նորվեգիան էր։ Մարտի 11-18-ը Նորվեգիայի Արկտիկական համալսարանում էին գտնվում ԻՀՏԿ՝ ամբիոնի վարիչ Սիեր Մարկուսյանը, Հինարարության ֆակուլտետի ղեկան Դավիթ Գրիգորյանը, Հինարարական նյութերի, պատրաստվածքների եվ կոնսերվացիաների արտադրության տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ Արտավազդ Արզումանյանը, Ջեռնազգազմատակարման և օրգափոխության ամբիոնի վարիչի տեղակալ Սիրանուշ Էգնատույանը և ԻՀՏԿ՝ ամբիոնի ախտեսնտներ Գոհար Ավետիսյանը ու Անդրանիկ Ակարմազյանը։ Աշխատանքային այցի ընթացքում մեր համալսարանի ներկայացուցիչները ծանոթացան Նորվեգիայի Արկտիկական համալսարանի ներուժին, ներկայացրեցին ՃՀՀԱՀ-ում շահեկիր ֆակուլտետների ու ամբիոնների և երկայնա ծրագրի շրջանակում ներդրվելիք մասնագիտացման գործընթացը և քննարկեցին մեր ու Նորվեգիայի Արկտիկական համալսարանեն ըի միջև սերտ համագործակցություն հաստատելու նպատակով փոխընդերման հուշագրի ստորագրման վերաբերյալ հարցեր։ Կրթության ոլորտում միջազգային համագործակցությանը միտված նորվեգական կենտրոնի (SIU) «Նորվեգիայի Արկտիկական համալսարանի և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջև ակադեմիական համագործակցություն» երկայնա ծրագրի շրջանակում, մեկնարկային հանդիպման ժամանակ, մեր համալսարանի պատվիրակները ներկայացրեցին ՃՀՀԱՀ շահեկիր ֆակուլտետների և ամբիոնների մասին, ինչպես նաև երկայնա ծրագրի շրջանակում ՃՀՀԱՀ-ում իրականացվելիք աշխատանքների մասին։ Իր հերթին Նորվեգիայի Արկտիկական համալսարանի ներկայացուցիչ և երկայնա ծրագրի համակարգող Յիծոնգ Քսուն էլ ներկայացրեց նույն ծրագրի շրջանակում իրականացվելիք աշխատանքների մասին։ Գործուղման ընթացքում ճանաչողական այց կատարվեց Նորվեգիայի Արկտիկական համալսարանի էներգախնայող և կայուն շինարարության առնչվող սարքավորումներով զինված լաբորատորիաներ։

5 “ԳՈՒՅՆԸ” ՀԱՄԱԽՄԲԵՑ



Մարտի 30-ին, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դիզայնի ֆակուլտետի ցուցարարուում բացվեց «Գույն» խորագրով ցուցահանդեսը։ Ցուցահանդեսի համար Գունատեսություն արարկայի գործնական ամփոփիչ աշխատանքներն էին ներկայացրել բոլոր առաջին կուրսեցիները։ Դրանցից, սակայն, ընտրվեցին լավագույնները և, արդեն այսօր, 60-ից ավելի աշխատանք հանձնվեց համալսարանի դասախոսների և ուսանողների դասին։ Գույներ, ձևեր, վառ մեղուրտ, տպավորված դեմքեր։ Դիզայնի ֆակուլտետի ցուցարարիչ մարդաշատ էր. և, վստահաբար, այդպիսի կլինի ևս մի քանի ամիս. գույները տարածվում են ու կանչում։



1 ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՎԵՑ՝ ՈՐՊԵՏ “ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏ”

Մարտի 15-ին, ՀՀ Ճարտարապետների միությունում տեղի ունեցավ միության 19-րդ համագումարը։ Համագումարին ներկա էին միության ղեկավար Սյրտիչ Մինասյանը, Քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահ Նարեկ Սարգսյանը, փոխքաղաքապետ Կամո Արեյանը, Հայաստանի Հինարարների միության նախագահ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանը, Հայաստանի Հինարարների միության տնօրեն Գուրգեն Սինասյանը, միության անդամներ, ոլորտի ներկայացուցիչներ։ Միության 244 անդամներից համագումարին ներկա էին 196-ը։ Ողջուներով ներկաներին պետական կոմիտեի նախագահ Նարեկ Սարգսյանը միության 19-րդ համագումարը պատմական որակեց այն առումով, որ միությունը վերակազմավորվում է՝ որպես «Ճարտարապետների պալատ»։ Համագումարի օրակարգում Հայաստանի Ճարտարապետների օրենսդրական կարգավիճակի հարցերն էին «Հայաստանի Ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող կազմակերպության անհրաժեշտ կանոնադրության և վերակազմավորման համար փաստաթղթերի հաստատումն ու Ճարտարապետների պալատի նախագահի ընտրությունը։ Նա նշեց, որ զրեքե բոլոր երկրներում պետության կողմից սահմանված Ճարտարապետների կարգավիճակը շատ հստակ է և ուժեղ հավելելով, որ ղեռև 1992թ-ին էր դրվել այն հարցը, որ Ճարտարապետներին միավորող կառույցը չի կարող լինել զուտ հասարակական միավորում. «Այսօր, քաղաքախոսաբար, կարողացանք հասնել նրան, որ ընդունվեց «Ճարտարապետական գործունեության մասին» օրենքը։ Եվ հետխորիդային երկրներում Ճարտարապետներին



3 ԱՎԱՐՏՎԵՑԻՆ ՍԵՆՏ ԷՏԻԵՆԻ ԴՊՐՈՑԻ ՌԻԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐԸ

Մարտի 29-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում ամփոփվեց Ֆրանսիայի Սենտ Էտիենի ազգային բարձրագույն Ճարտարապետական դպրոցի պատվիրակության այցը։ Արդեն ավանդաբար դասախոսներ Րաֆֆի Բեդրոսյանի և Անդրե Սոլմեի նեկավարությամբ մեր համալսարան ժամանած տարբեր ազգության 8 ուսանողների այցի նպատակը նույնն էր՝ 13 հայ ուսանողների հետ անցկացնել աշխատանքային համատեղ օրեր, ուսումնասիրել հայկական Ճարտարապետության նմուշները։ Այս անգամ օտարազգի ուսանողներին Հայաստան եր ուղևորդել Շառլկածորի Օրբեյան եղբայրների թանգարանի հարակից տարածքի թաղամասը։ Խմբերի բաժանված՝ մեր համալսարանի և Սենտ Էտիենի ազգային բարձրագույն Ճարտարապետական դպրոցի ուսանողներն ուսումնասիրեցին տարածքը, այն վերակառուցելու և նոր շունչ հաղորդելու նախագծեր մշակեցին։ Արդեն այսօր, նրանք, ՃՀՀԱՀ Ճարտարապետության ֆակուլտետի ղեկան Սարգիս Թովմայանի, Ճարտարապետական նախագծման և Ճարտարապետական միջավայրի ամբիոնի վարիչ Կարեն Ռաշիդյանի,քաղաքաշինության ամբիոն վարիչ Ջառա Մամյանին, Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի վարիչ Էմմա Հարությունյանին, ասարանտ Լարիսա Խաչաթյանին, ներկայացրեցին իրենց նախագծերն ու պատկերացումները Շառլկածորյան շքեղ բնության գրկում նոր թաղամասի քաղաքաշինական վերակառուցման շուրջ։ Համատեղ աշխատանքային օրերին մասնակցած ուսանողները ստացան հավաստագրեր՝ վաղը Հայաստանից մեկնելու, բայց սիրով կրկին վերադառնալու հույսով։



6 ԽՈՆԱՐՀՈՒՄ ԵՎ ԱՂՈՒՔ՝ ԱՊՐԻԼՅԱՆ ԱՆՄԱՀ ՀԵՐՈՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2 տարի առաջ էր, երբ Ապրիլյան քառօրյա պատերազմը հանգցրեց տասնյակ ընտանիքների ձրազը և խլեց շատ երիտասարդների կյանքեր։ Այսօր, մեր խաղաղ ու անվտանգ գոյությունը հենց շնորհիվ է, նրանք քաջության ու հայրենասիրության։ Այս օրերին ողջ հայությունն է գլուխ և ծաղիկներ խոնարհում նրանց անմար հիշատակի առջև։ Մեր համալսարանի Ուսանողական խորհուրդն այս տարի նույնպես կազմակերպել էր մոմավառությամբ քայլերթ դեպի Եռաբլուր։ Երթը գլխավորում էին ՃՀՀԱՀ ռեկտոր Գագիկ Գալստյանը, ՀՀԿ ինքաբարձուների խորհրդի համակարգող Կարեն Ավագյանը, ռեկտորի խորհրդական, Ուսանողական խորհրդի նախագահ Հովսեփ Հովսեյանը, բուհերի և երիտասարդության ինքուր առաջնորդ Գեղամ սարկավազ Ավետիսյանը և Քառօրյա պատերազմի հերոս Ադամ Սահակյանի եղբայր Մուշեղ Սահակյանը։ Գեղամ սարկավազի գլխավորությամբ «Եռաբլուր» պանթեոնում ուսանողներն աղոթք իղեցին առ Աստված. «Ես վստահ եմ, որ այս նախածեմությունը բոլորիդ սրտից բխած ուխտագնացության նման մի ճանապարհ է։ Այստեղ ենք մեր իրոհին ու սիրտը խոնարհեցնելու մեր նախատակ եղբայրների առաջը»,- նշեց սարկավազը։ Երթի մասնակիցները շարժվեցին դեպի Ապրիլյան քառօրյա պատերազմի անմահ հերոսների շիրիմները, խոնարհեցին ծաղիկներ։ Հավերժ փա՜ռք մեր հերոսներին...



միավորող կառույցին տրված այս կարգավիճակով Հայաստանն առաջինն է»։ Նարեկ Սարգսյանը հայտարարեց, որ ըստ ՀՀ Ազգային ժողովի՝ 2017թ-ի դեկտեմբերի 6-ին՝ 92 կողմ ծայրով միաձայն ընդունված «Ճարտարապետական գործունեության մասին» ՀՀ օրենքի, Հայաստանում Ճարտարապետների միության բազայի հիման վրա սփռի ձևավորվեր ոլորտի գործունեությունը կարգավորող նոր մարմին՝ Ճարտարապետների պալատը։ Այսօր՝ միության19րդ համագումարում Ճարտարապետների պալատի վերակազմավորումը հաստատվեց. «Պալատի կարգավիճակը պետության կողմից հաստատված է։ Այն լուրջ բազա է, որ Ճարտարապետների ապագա սերունդն այլ պայմաններում աշխատի»,- հավելեց Նարեկ Սարգսյանը։ Համագումարին ներկա փոխքաղաքապետ Կամո Արեյանը վստահեցրեց, որ քաղաքապետարանը կշարունակի իր համագործակցությունը ապագա Ճարտարապետների պալատի հետ. «Մենք պետք է ողջամտորեն ընդունենք նոր կյանքի մարտահրավերները, և միասնաբար ամուր պահենք մեր ունեցած դասական Ճարտարապետությունը»։ Համագումարի մասնակիցներին իր ողջույնի խոսքը իղեց նաև ՃՀՀԱՀ-ի ռեկտոր, ՀՀ Հինարարների միության նախագահ Գագիկ Գալստյանը։ Շնորհավորելով Ճարտարապետական գործունեության օրենքի ընդունման կապակցությամբ՝ ռեկտոր Գալստյանը իույս հայտնեց, որ նրապագա կարգավիճակը ներկա փոխքաղաքապետի հայկական Ճարտարապետության զարգացմանը և դիմագծի պահպանմանը։ «Առանձնակի նշելով Ճարտարապետների միության և մեր բարեկամական ու գործնական հարաբերությունները մասնագիտական կարգերի պատրաստման, քաղաքաշինական խնդիրների լուծման գործերում, հավաստիացանում եմ, որ մեր համագործակցությունն այսուհետ կլինի ավելի սերտ և արդյունավետ»,- հավելեց Գ. Գալստյանը։ Նշենք, որ այսօր հրափրված համագումարի ընթացքում նախատեսված է ընտրել նախկին Ճարտարապետների միության փոխարեն նոր կազմավորված «Ճարտարապետների պալատ» ինքնակառավարվող միավորման նոր նախագահին, որն էլ միաձայն ընտրվեց Ճարտարապետների միության նախագահ Սկրտիչ Մինասյանը։



4 ՌԻԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱԶՄԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐԻՆ



Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հյուրն էր ԱՄՆ կրթաթոշակային ծրագրերի շրջանավարտ Արսեն Կարապետյանը։ ԱՄՆ պետքարտուղարության կողմից իովանավորվող Education USA հայաստանյան գրասենյակը, որը պատկանում է աշխարհում գոյություն ունեցող Education USA հայրուրավոր խորհրդատվական կենտրոնների ցանցին, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության և Ամերիկյան խորհուրդների հետ համատեղ նախածեռնել է «We Share» հանդիպումների շարք, որի շրջանակներում ամերիկյան ծրագրերի շրջանավարտներն իրենց գիտելիքներն են կիսում թեմայով հետաքրքրված անձանց հետ։ «We share» ծրագրի հերթական կանգառը մեր համալսարանում էր։ Արսեն Կարապետյանը մեր համալսարանում էր պատմելու ամերիկյան քաղաքաշինության, ընդունված նորմերի և ոլորտը կարգավորող մեխանիզմների մասին։ «Քաղաքաշինական կարգավորումները Չիկագոյի օրինակով» թեմայով դասախոսությամբ ներկա էին Ճարտարապետության ֆակուլտետի ղեկան Սարգիս Թովմայանը, Քաղաքաշինության ամբիոնի վարիչ Ջառա Մամյանը և մի խումբ ուսանողներ։ Չիկագոյի օրինակով ներկայացնելով ամերիկյան քաղաքաշինության ոլորտը Արսեն Կարապետյանը շեշտադրեց, հատկապես, այդ հարցում պետության ակտիվ դերակատարումը։ Նա պատմեց բազմաթիվ համալսարանների կից գործող նախագծային ինստիտուտների և Չիկագոյի քաղաքային խորհրդի գործունեության մասին։ Նրա խոսքով հենց վերջինն էլ աահմանում է քաղաքաշինական բոլոր այն թյույալրելի նորմերը, որոնք պարտադիր են ցանկացած շինության կառուցապատման գործում։ Թեման հետաքրքիր էր, դասախոսությունը կայացած։ Սա փաստեցին ուսանողների կողմից բարձրացված բազմաթիվ հարցերը, բանախոսի հանգամանակից պատասխաններն ու մեր և Չիկագոյի քաղաքաշինության միջև եղած տարբերությունների մասին ծավալված ակտիվ քննարկումը։

7 ՖՐԱՆԿՈՖՈՆ ՌԻԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑԿԱՑՎԵՑ 2-ՐԴ ՄՐՑՈՒՅԹԸ



Մարտի 27-ին Երևանի երիտասարդական հիմնադրամի դափնիում տեղի ունեցավ Ֆրանկոֆոնիայի թվայնացված կենտրոնի կողմից կազմակերպված միջհամալսարանական երկրորդ մրցույթը։ Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության անդրան համալսարաններից (Հայաստանում՝ Ֆրանսիական համալսարան, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Երևանի պետական համալսարան, Հայկական պետական մանկավարժական համալսարան և Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաառարակագիտական համալսարան) մասնակցեցինչորասական ուսանող, ովքեր մրցեցին հիմնվելով Ֆրանկոֆոնիայի և ֆրանկոֆոն մշակույթների վերաբերյալ իրենց ունեցած ընդհանուր գիտելիքների վրա։ Լավագույն թիմերին առանձնացնելը դժվար էր, քանի որ բոլորը շատ լավ էին ներկայանում տարբեր փուլերում և հարթամակը երբեմն կախված էր լինում ընդամենը մեկ միավորի տարբերությունից։ Մրցույթի առաջնային նպատակը հայ ֆրանկոֆոն ուսանողներին միավորելն էր՝ Ֆրանկոֆոնիայի տունին նվիրված միջոցառումների շրջանակում։ Գավաթը մեկ տարի կանցկացվի Հայաստանում Ֆրանսիական համալսարանում, իսկ հաջորդ տարի կփոխանցվի երրորդ մրցույթի արդյունքում հաղթող համալսարանին։ Շնորհակալություն ենք հայտնում ՃՀՀԱՀ-ն ներկայացնողֆրանկոֆոն 4 ուսանողներին (Հայկ Հակոբյան, Աստղիկ Սաշինյան, Րաֆֆի Վիրիկյան և Վերոնիկա Սելիբ-Մուրադյան), ովքեր պատվով ներկայացան մրցույթին և Ֆրանկոֆոնիայի թվայնացված կենտրոնի կողմից ստացան Նոյան-Տապան գրախնուրթի նվեր-քարտեր։

8

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐԿՐԻՆ



Համալսարանների գիտահետազոտական մակարդակը համաշխարհային հարթակում բարձրացնելու նպատակով կարևորվում է միջազգային հեղինակություն ունեցող պարբերականներում գիտական հոդվածների տպագրությունը: SCOPUS-ի և Web Of Science համակարգերում ընդգրկված գիտական հրապարակումները կարևորվում են ապիրիանտների, գիտաշխատողների համար, որոնք նրանց հնարավորություն են ընձեռում բարձրանալու համաշխարհային գիտական հարթակ:

Scopus-ը (<http://www.scopus.com/>) աշխարհի ամենախոշոր միասնական տեղեկատու բազաներից մեկն է, որում ներառված են ավելի քան 21000 գիտության, տարբեր ոլորտների պարբերականներ շուրջ 4000 միջազգային հրատարակիչների կողմից: Պարբերաբար թարմացվող Scopus-ի տվյալների բազան ներառում է առաջատար գիտական հրատարակիչների պարբերականները: Հայտնի է, որ պարբերականները դասակարգվում են ըստ իրենց ազդեցության գործակցի (Impact factor): Պարբերականի ազդեցության գործակիցը բանական ցուցանիշ է, որը որոշվում է տվյալ տարբերականում հրատարակված հոդվածների քանակի և յուրաքանչյուր հոդվածի հղումների քանակի հարաբերակցությամբ:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի երիտասարդ մասնագետների գիտական աշխատանքների համակարգող Մամուկ Բարսեղյանի նախաձեռնությամբ կազմվեց երիտասարդ կամավորների խումբ: Խմբի անդամներն իրենց առջև նպատակ դրեցին գտնելու պարբերականներ, որոնք ներկայումս ընդգրկված են SCOPUS համակարգում և անվճար են գիտական հոդվածների տպագրության համար: Վերջին երեք ամիսների բուռն աշխատանքի արդյունք համդիսացավ ՃՀԱՀ ֆակուլտետների յոթ նեղ մասնագիտություններով տասական միջազգային պարբերականների ցուցակագրումը: Ինչպես արդեն նշվեց, պարբերականներում հոդվածները տպագրվում են անվճար և հիմնականում անգլերեն լեզվով:

Համալսարանի տարբեր ամբիոններում գրքերի տեսքով ներկայացվել է յոթ նեղ մասնագիտական ուղղվածությամբ (Ճարտարապետություն, դիզայն, շինարարական նյութեր, գեոդեզիա, գետտեխնիկա, ջրային համակարգեր, տուրիզմ) հավաքագրված պարբերականների ցուցակ: Մասնագիտական ամբիոններում կազմակերպված հանդիպումների ընթացքում պարզաբանվել են ներկայներին հուզող բազմաթիվ հարցեր և խնդիրներ:

Խմբի անդամները պատրաստակամորեն համագործակցում են համալսարանի բոլոր այն աասիրանտների, երիտասարդ և ավագ գիտաշխատողների, ինչպես նաև դասախոսների հետ, ովքեր հետաքրքրված են միջազգային հարթակներում ընդգրկված անվճար պարբերականներում գիտական հոդվածներ տպագրելու գործով:

«ՃՀԱՀ երիտասարդ մասնագետների միավորում» խմբի անդամներն են Մամուկ Բարսեղյան ֆ.մ.գ.թ. (ma-nuk.g.barseghyan@gmail.com), Սեդա Կոստանյան (seda.kostanyan@gmail.com), էվլին Օրդուխանյան (Ordoukhanian.evlin@gmail.com), Նամատ Նամատյան (namatyan.namat@mail.ru), Անի Արտեմյան (aniartemyan@mail.ru), Անի Ահառյան (ani-acharyan@mail.ru) արվ.թեկ., Տաթևիկ Փայտյան (paytyantatevik@gmail.com) և Շահեն Շահինյան տգթ. (shahen_shahinyan@mail.ru):

9

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱԹԱՆԱԿՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՇԱԽՄԱՏՈՒՄ



Սույն թվականի ապրիլի 3-6-ը անցկացվող ՀՀ բուհերի 19-րդ մարզական խաղերի արագ շախմատ մարզաձևում ունեցանք մի քանի հաղթանակներ: Մեր համալսարանի աղջիկների շախմատի հավաքական թիմը գրավեց պատվավոր 2-րդ հորիզոնականը, իսկ անհատական պայքարում 1-ին և 2-րդ տեղերը գրավեցին մեր ուսանողուհիները, հաղթող ճանաչվեց դիզայն ֆակուլտետի ուսանողուհի Սիրանուշ Դուկասյանը, իսկ 2-րդ հորիզոնականը գրավեց կառավարման ֆակուլտետի ուսանողուհի Նարե Նաթեյանը:

Շնորհավորում ենք մեր շախմատի թիմին և մեր բուհին այս հաղթանակների կապակցությամբ ցանկանալով նորանոր հաջողություններ:



12

ՆՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՄԵՐ ԵՎ ԿԼԵՐՄՈՆ ՖԵՐՐԱՆԻ ՄԻՋԵԿ

Արդեն 15 տարի է, ինչ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի և Կլերմոն ֆերրանի ազգային բարձրագույն Ճարտարապետական դպրոցի միջև սերտ համագործակցության և բարեկամական կապեր են հաստատված: Այս տարիների ընթացքում իրականացվել են անհաշվելի համատեղ նախագծեր, փոխադարձ այցեր և աշխատանքային օրեր:

Ապրիլի 27-ին ամփոփվեց 25-րդ հոբելյանական համատեղ աշխատանքային շաբաթը: Այս անգամ Կլերմոն ֆերրանից և Իսպանիայի Կորուինիայի համալսարանից ժամանած տարբեր ազգությունների ուսանողները մեր համալսարանի ուսանողների հետ, 4 խումբ կազմած, ուսումնասիրեցին Երևան քաղաքի Արաբիկ վարչական շրջանում գտնվող նախկին տեքստիլ ֆաբրիկայի շենքի և վերակառուցման նախագծեր առաջարկեցին:

Նախագծերի ցուցադրման և մասնակցության վկայականների հանձնման արարողությանը ներկա էին ՃՀԱՀ-ի և Կլերմոն ֆերրանի ազգային բարձրագույն Ճարտարապետական դպրոցի ղեկավարներ Գազիկ Գալստյանն ու Անդեա Բարբին, ՀՀ Մշակույթի փոխնախարար Արև Սամուելյանը, Ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սյարգիս Թովմասյանը, Միջազգային կապերի գծով պրոռեկտոր Վարդգես Եղոյանը, Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի վարիչի ժ/պ, դոցենտ Էմմա Հարությունյանը, դասախոսներ և ուսանողներ:

Մեր և Կլերմոն ֆերրանի համալսարանների միջև համագործակցությունը, սակայն, այսքանով չգերափակվեց: Երկու համալսարանների ղեկավարներ Գազիկ Գալստյանն ու Անդեա Բարբին ստորագրեցին համաձայնագիր Ճարտարապետության բնագավառում գիտական և մանկավարժական համագործակցություն հաստատելու համար: Համաձայնագիրը նախատեսված է 5 ուսումնական տարվա համար:



14

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ «ԿՈԿԱ-ԿՈՒԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՄՓՈՓՎԵՑ ՄՐՑԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹՅԱՄԲ

«Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա» ընկերությունը, համագործակցելով Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Կարիերայի կենտրոնի հետ, հայտարարել էր դիզայներական մրցույթ: Մայիսի 15-ին ժյուրիի քվեարկությամբ մրցույթին մասնակցած ուսանողական աշխատանքներից ընտրված լավագույն երեքը արժանացան դրամական պարգևների: 1-ին տեղ 2000 դոլարին համարժեք ՀՀ դրամ, 2-րդ տեղ 1000 դոլարին համարժեք ՀՀ դրամ, 3-րդ տեղ 500 դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Մրցույթին մասնակցած և առաջին փուլը հաղթանարած ու ամբողջական նախագիծ ներկայացրած Ճարտարապետության և Դիզայնի ֆակուլտետների երեք լավագույնները ճանաչվեցին հաղթողներ: I տեղ՝ Մարիետա Գևորգյան (ամբողջական նախագիծ՝ գրասենյակային տարածք, խոհանոց, բազմաֆունկցիոնալ սենյակ)

II տեղ՝ Վաղիմիր Սահակյան (ամբողջական նախագիծ՝ գրասենյակային տարածք, խոհանոց, բազմաֆունկցիոնալ սենյակ)

III տեղ՝ Սերգեյ Սարգսյան (բազմաֆունկցիոնալ սենյակ) Աշխատանքները ժյուրիի կողմից գնահատվել էին ըստ ստեղծագործական մոտեցման, հանձնած նյութերի որակի և ճշգրտության: Մրցանակները հանձնեց «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթինգ Քամփին Արմենիա Ընկերության» գլխավոր տնօրեն Քրիստոֆ Սպելը: Ներկա էին նաև մեր համալսարանի Կարիերայի կենտրոնի ղեկավար Հայկ Սարգսյանը, «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթինգ Քամփին Արմենիա Ընկերության» ժյուրիի կազմի ներկայացուցիչները, ինչպես նաև տարբեր բաժինների աշխատակիցներն ու ղեկավարները: Նվերներ ստացան նաև մյուս մասնակիցները, ում նախագծերը չէին հավաքել բավարար միավորներ հաղթող հորիզոնականներում հայտնվելու համար:

Կարիերայի կենտրոնի և ընկերության համագործակցությունը կրելու է շարունակական բնույթ:



10

ՀՐԱԶԴԱՆՈՒՄ ՀԻՇԵՑԻՆ ԱՊՐԻԼՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ուսանողական խորհրդը, Հրազդանի քաղաքապետարանի հրավերով, Հրազդանի Դրամատիկական թատրոնում անցկացրեց «Արցախյան հերոսներից մերօրյա հերոսներ» խորագրով մեծադրաման երեկո ի իշխատակ Արցախյան Քառօրյա պատերազմում զոհված հերոսների:

Միջոցառմանը ներկա էին զոհված զինծառայողների ընտանիքի անդամները, քաղաքապետարանի աշխատակազմը փոխքաղաքապետի գլխավորությամբ: Միջոցառումն ընդունվեց մեծ ոգևորությամբ և հուսնակայա ծախիսարություններով: Նմանատիպ միջոցառումները մեր ուսանողական խորհրդի կողմից կլինեն շարունակական:



ԾՀՀԱՀ ՎՈՒԼՅՔՐՈՒՆ ՏՂԱՆԵՐԻ ԹԻՄԸ ՀՀ ԲՈՒՀԵՐԻ 19-ՐԴ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ 3-ՐԴ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Սույն թվականի ապրիլի 16-22-ը ՀՀ բուհերի 19-րդ մարզական խաղերի շրջանակներում անցկացվեց վոլեյբոլի տղաների առաջնությունը: Մեր համալսարանի վոլեյբոլի տղաների թիմը հաղթելով ՀԱՀ-ի թիմին դարձավ 3-րդ մրցանակակիր: Մրցանակակիր բոլոր թիմերը պարգևատրվեցին պատվոգրերով, մեդալներով և զավաթներով: Նաև Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիայի կողմից «Լավագույն խաղացող» մրցանակի արժանացավ մեր համալսարանի կառավարման ֆակուլտետի ուսանող, ՀՀ վոլեյբոլի հավաքականի անդամ և մեր թիմի առաջատար Անդրէ Սիմոնին:

Շնորհավորում ենք մեր վոլեյբոլի թիմին և մեր բուհին այս հաջողության կապակցությամբ ցանկանալով նորանոր բարձունքներ:



13

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՍԿՍԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ




Մայիսի 11-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում, Եվրոպական Միության Erasmus+ ծրագրի ֆինանսավորմամբ «Ճարտարագիտական կրթության ոլորտում ինովացիոն կարողությունների և ձեռնարկատիրական հմտությունների ընդլայնում (InnoCENS)» նախագծի շրջանակներում, հանդիսավոր կերպով բացվեց Նորարարության և ձեռնբերցության աջակցման կենտրոնը:

Կենտրոնի բացմանը ներկա էին ղեկավար Գազիկ Գալստյանը, Միջազգային կապերի գծով պրոռեկտոր Վարդգես Եղոյանը, Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Վարադուստ Հովհաննիսյանը, ներկայացուցիչներ Եվլինիայի Թագավորական ինստիտուտից, Վալեն-սիայի պոլիտեխնիկ համալսարանից, Բոլոնիայի համալսարանից:

Նշենք, որ Կենտրոնը նորարարական գաղափարների ստեղծմանն ու զարգացմանը խթանող բաց հարթակ է բոլոր երիտասարդների, ուսանողների և դասախոսների համար: Այն ուղղված է կատարելագործելու և համակարգելու կրթություն-գիտություն-բիզնես փոխկապակցվածությունը: Կենտրոնը հարմարավետ միջավայր է ստրամադրում ստորադասիերին և նորարար խմբերին գաղափարների զարգացման և իրագործման համար:

Կենտրոնի աշխատանքն ընդգրկում է ինտելկալ հիմնական ուղղությունները՝ կրթություն, խորհրդատվություն, տարածք, փորձի փոխանակում, մրցույթներ:



Երևանի հեղինակ՝
Թողարկման պատասխանատու՝

Դիանա Պողոսյան
Արմենուհի Ալեքսանյան

ՀՀ, ք. Երևան, Տեղյան փ. 105
Հեռ.՝ + 374 10 580156
+ 374 10 547425

15

ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՊԱՐՏ ՄԵՐՈՒՆԴԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԴՊՐՈՑԻՆ



Մայիսի 25-ին հայրուրավոր 12-րդ դասարանիցներ հրաժեշտ տվեցին իրենց դպրոցներին՝ հասուն մտքով և գիտակցությամբ, որ առջևում մեծ կյանքն է նորից տարբերություններով, խոչընդոտներով ու պատասխանատվությամբ: Վերջինգնացման ետուզե էր նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Մ. Արեղյանի անվան ավագ դպրոցում: Շրջանավարտներին շնորհավորելու և իրենց բարեմաղթանքները հղելու էին եկել ՃՀԱՀ-ի ղեկավար Գազիկ Գալստյանը, Ուսանողական խորհրդի նախագահ, ղեկավարի խորհրդական Հովսեփ Հովեյանը, հյուրեր ու ծնողներ:

Ավարտականների զգացումները, ոգևորությունն ու հուզմունքը նույն էր հապարտ էին, որ հենց իրենց դպրոցի շրջանավարտներն են, հապարտ էին, որ ազատ ու անկախ Հայաստանի քաղաքացիներ են և լիազոր, որ այսուհետև իրենց կրթությամբ և ընտրած մասնագիտությամբ իրենց ներդրումը նույնպես ունենալու են հապարտ երկրի շենացման, հզորացման գործում:

Մ. Արեղյանի անվան ավագ դպրոցի շրջանավարտները, ինչպես յուրաքանչյուր միջոցառմանը, այնպես էլ Վերջին գնացին, չէին շրջանցել մեր երկրի սահմանները պահող և Հայրենիքի համար իրենց կյանքը զոհած հայրդիներին: Հիշեցին, խոնարհվեցին, երախտիքի ու հպարտության խոսքեր հնչեցրին: Այնուհետև, երգ ու պար, թատերականացված ներկայացում, դպրոցական օրերի հուշեր և շնորհակալություն ուսուցիչներին:

Այսպիսին էր ավարտական ցերեկույթի խմանկարը, որում յուրաքանչյուր աշակերտի դեմքին դրոշմված էր իր վստահ քայլն արած Նոր Հայաստանի հապարտ քաղաքացու կնիքը: